

<https://doi.org/10.52837/27382702-2021-34.2-10>

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1992-2021 թթ.)*

Եվա Հարությունյան

Հոդվածի նպատակն է ցույց տալ հայ-ճապոնական դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Հոդվածում ներկայացված է ճապոնիայի տնտեսական քաղաքականության 3 փուլ՝ հաշվի առնելով ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության տեսակը, որը փոխկապակցված է Հայաստանի տնտեսական աճի և ՀՆԱ-ի մակարդակի հետ:

Առաջին փուլն ընդգրկում է 1992-1999 թթ., որի ժամանակ երկկողմ տնտեսական հարաբերությունները սահմանափակվում էին միայն ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող անհատույց դրամաշնորհային օգնությամբ՝ նպատակ ունենալով աջակցել նորանկախ պետության տնտեսության վերականգնմանը և ապահովել կայուն տնտեսական աճ:

Երկրորդ փուլի (2000-2004 թթ.) ընթացքում սկիզբ դրվեց երկու երկրների միջև տնտեսական համագործակցությանը: Հայաստանն իր կայուն տնտեսական աճի շնորհիվ ճապոնիայի կողմից ստացավ փոխառություններ, որի նպատակը տնտեսական ենթակառուցվածքների զարգացումն էր: Այս տարիներին ամրապնդվեցին երկկողմ տնտեսական հարաբերությունները:

Երրորդ փուլի (2005 - մինչ օրս) ընթացքում ճապոնիան ընդլայնեց Հայաստանի Հանրապետության հետ իր համագործակցության շրջանակները և սկսեց տրամադրել տեխնիկական սարքավորումներ՝ մի շարք թիրախավորված ոլորտների զարգացման նպատակով: Այս փուլում ճապոնիան հստակ տարրորշեց իր աջակցության տրամադրման ուղղվածությունը և Հայաստանի տնտեսության խթանման համար անհրաժեշտ ոլորտների զարգացումը՝ մասնավորապես կարևորելով էներգետիկ ոլորտի, միջին և մանր բիզնեսի, ինչպես նաև գյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերը:

Արդեն 2018 թվից ճապոնիան Հայաստանին սկսեց դիտարկել որպես լիիրավ տնտեսական սուբյեկտ, ում հետ բացի աջակցության տրամադրումից, հնարավոր է նաև կառուցել ամուր տնտեսական փոխշահավետ հարաբերություններ: Դրա վառ վկայությունն է ոչ միայն ներդրումների ազատականացման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը, այլև 2018 թ. սեպտեմբերին ճապոնիայի արագորձնախարար Տարո Կոնոյի առաջին այցելությունը Հայաստան,

* Հոդվածն ընդունվել է տպագրության 05.11.2020 թ.: Գրախոսվել՝ 24.11.2021 թ.:

որի ժամանակ կարևորվեց երկկողմ հարաբերությունների զարգացումը բանկային, նորարարության, սննդի անվտանգության, տեղեկատվական տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մշակութային փոխանակումների, գիտական և կրթական ոլորտների նախագծերի իրականացման ոլորտներում:

Բանալի բառեր՝ Ճապոնիա, Հայաստան, տնտեսական հարաբերություններ, Զարգացման Պաշտոնական Աջակցություն, դրամաշնորհ, փոխառություն, տեխնիկական աջակցություն:

Խորհրդային Միության փլուզումից հետո 1992 թ. սեպտեմբերի 7-ին հայտարարագրերի փոխանակմամբ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Հայաստանի և Ճապոնիայի միջև: 2010 թ. հունիսին Տոկիոյում բացվեց Հայաստանի դեսպանությունը, իսկ 2015 թ. հունվարին Հայաստանում՝ Ճապոնիայի դեսպանությունը:

Երկու երկրների միջև հեռավորությունը, Հայաստանի ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքը, հարևան պետությունների կողմից Հայաստանի պատմական տարածքների նկատմամբ հավակնությունների պայմաններում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունը խոչընդոտում են երկկողմ տնտեսական հարաբերությունների բնականոն ու լիարժեք կայացմանը: Ճապոնիայի կառավարությանը պահանջվեց տևական ժամանակ տարորոշելու Հայաստանի նկատմամբ իր տնտեսական քաղաքականությունը: Սկզբնական փուլում Ճապոնիան տրամադրում էր ֆինանսական աջակցություն՝ նպատակ ունենալով օգնել Հայաստանին հաղթահարել տնտեսական ճգնաժամը: Օգնության տեսակը որոշվում էր՝ հաշվի առնելով երկրի տնտեսական աճի ցուցանիշները, ինչպես նաև ՀՆԱ-ի մակարդակը: Ըստ աջակցության տրամադրման տեսակի՝ Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ կարելի է բաժանել 3 փուլի:

Առաջին փուլն ընդգրկում է 1992-1999 թթ., որի ժամանակ երկկողմ տնտեսական հարաբերությունները սահմանափակվում էին միայն Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող անհատույց դրամաշնորհային օգնությամբ՝ նպատակ ունենալով աջակցել նորանկախ պետության տնտեսության վերականգնմանը և ապահովել կայուն տնտեսական աճ:

Երկրորդ փուլի (2000-2004 թթ.) ընթացքում սկիզբ դրվեց երկու երկրների միջև տնտեսական համագործակցությանը: Հայաստանն իր կայուն տնտեսական աճի շնորհիվ Ճապոնիայի կողմից ստացավ

փոխառություններ, որի նպատակը տնտեսական ենթակառուցվածքների զարգացումն էր: Այս տարիներին ամրապնդվեցին երկկողմ տնտեսական հարաբերությունները:

Երրորդ փուլի (2005 - մինչ օրս) ընթացքում Ճապոնիան ընդլայնեց Հայաստանի Հանրապետության հետ իր համագործակցության շրջանակները և սկսեց տրամադրել տեխնիկական սարքավորումներ՝ մի շարք թիրախավորված ոլորտների զարգացման նպատակով: Այս փուլում Ճապոնիան հստակ տարրորոշեց իր աջակցության տրամադրման ուղղվածությունը և Հայաստանի տնտեսության խթանման համար անհրաժեշտ ոլորտների զարգացումը՝ մասնավորապես կարևորելով էներգետիկ ոլորտի, միջին և մանր բիզնեսի, ինչպես նաև գյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերը: Ճապոնիան նաև մեծապես աջակցում է Հայաստանին՝ տրամադրելով ճապոնական տեխնոլոգիաներ բնական աղետի գոտիներում ռիսկերի կանխարգելման, միաժամանակ վերապատրաստում է հայ մասնագետներին՝ արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու նպատակով:

Այսպես՝ Հայաստանի Երրորդ Հանրապետության և Ճապոնիայի միջև տնտեսական հարաբերությունների սկիզբը դրվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումից անմիջապես հետո՝ 1992 թ. հոկտեմբերին, երբ Հայաստանի պաշտոնական պատվիրակությունն այցելեց Ճապոնիա՝ նորանկախ պետություններին մարդասիրական և տեխնիկական օգնությանը նվիրված միջազգային համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար: Նույն թվականին Հայաստանը միացավ նոր ստեղծված ԱՊՀ երկրներին օգնության կազմակերպման նպատակով Ճապոնիայի հետ ստորագրված «Օժանդակության հանձնաժողովի ստեղծման մասին» համաձայնագրին՝ դրանով իսկ սկիզբ դնելով երկկողմ տնտեսական հարաբերությունների առաջին փուլին: Արդեն 1993-1994 թթ. որպես արտակարգ օգնություն Ճապոնիայի կառավարությունը Հայաստանին տրամադրեց 4 մլն ԱՄՆ դոլար, որից 1 մլն օգտագործվեց նավթ գնելու, 2 մլն-ը՝ դեղորայք և բժշկական սարքավորումներ, իսկ մնացած 1 մլն՝ էլեկտրական մալուխների ձեռքբերման համար¹: Այսպիսով, երկկողմանի տնտեսական հարաբերությունների զարգացման առաջին փուլի ընթացքում, Ճապոնիայի կառավարությունը նորանկախ Հայաստանի Հանրապետությանը տրամադրում էր միայն

¹ Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 69:

դրամաշնորհային աջակցություն առանց մարման որևէ պարտավորության՝ պայմանավորված երկրում ստեղծված ծանր տնտեսական վիճակով և ՀՆԱ-ի ոչ կայուն աճով (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստան Համախառն ներքին արդյունք մեկ շնչի համար (դոլար) (1990-2019թթ.)									
1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999
\$651	\$600	\$364	\$348	\$383	\$426	\$538	\$558	\$649	\$637
2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
\$664	\$741	\$835	\$992	\$1271	\$1753	\$2301	\$3347	\$4276	\$3193
2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
\$3432	\$3761	\$3685	\$3844	\$3995	\$3618	\$3606	\$3934	\$4237	\$4623

Աղբյուր՝ ВВП Армении, 1990-2019,
<https://be5.biz/makroekonomika/gdp/am.html>

1997 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած դնոր երկրների հերթական խորհրդաժողովի ընթացքում ՀՀ և Ճապոնիայի պատվիրակությունների միջև Ճապոնիայի **Զարգացման պաշտոնական աջակցության** (ՉՊԱ) (ODA) ծրագրի շրջանակներում ստորագրվեց **Իենային արտոնյալ վարկերի գծով առաջին փաստաթուղթը**:

Ի՞նչ է իրենից ներկայացնում **Զարգացման պաշտոնական աջակցման** ծրագիրը:

Ճապոնիան, լինելով տնտեսական զարգացած տերություն, զարգացող երկրներին ՉՊԱ ծրագրի միջոցով տրամադրում է աջակցություն՝ նպաստելով այդ երկրներում տնտեսական, գիտատեխնիկական, սոցիալական և այլ ծրագրերի իրականացմանը: 1954 թ. հոկտեմբերի 6-ին Ճապոնիան, միանալով Կոլոմբոյի նախագծին, սկիզբ դրեց զարգացող երկրների հետ «կառավարություն - կառավարություն» տնտեսական համագործակցությանը²: Կոլոմբոյի նախագիծը ստեղծվել է դեռևս 1950թ.՝ նպատակ ունենալով դյուրացնել տնտեսական և տեխնիկական

² Japan's ODA-Fifty Years in the Front Lines, Website of Japan International Cooperation Agency, https://www.jica.go.jp/english/publications/reports/network/archive_2004/vol_25_2.html

համագործակցությունը Բրիտանական Ազգերի Համագործակցության անդամ երկրների միջև: Սկզբնական փուլում Ճապոնիան այս ծրագրի միջոցով իրականացնում էր փոխհատուցում ասիական երկրներին՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հասցրած վնասների համար: Տնտեսական աճին զուգընթաց և իր միջազգային դերի ամրապնդմամբ, 1960-ականների կեսերից Ճապոնիայի կողմից տրամադրվող օտարերկրյա աջակցությունն ընդլայնվեց և դիվերսիֆիկացվեց: Բացի հասարակ դրամաշնորհից 1969 թվից սկսած Ճապոնիան սկսեց տրամադրել փոխառություններ և տեխնիկական աջակցություն զարգացող երկրներին:

Ճապոնիայի ՉՊԱ նախագիծն իր մեջ ներառում է 2 տեսակի աջակցություն՝ բազմակողմանի աջակցություն և երկկողմանի աջակցություն: **Բազմակողմանի աջակցությունը** տրամադրվում է միջազգային բանկերի և կազմակերպությունների միջոցով, որոնց անդամակցում է Ճապոնիան և մեծածավալ ներդրումներ է կատարում: Դրանց թվում են՝ Ասիական Զարգացման Բանկը, Համաշխարհային բանկը, Միավորված Ազգերի Կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիրը և այլն: Ինչ վերաբերում է **երկկողմանի աջակցությանը**, որը տրվում է կառավարության կողմից մեկ այլ կառավարությանը, այն լինում է երկու տեսակի՝ **երկկողմանի փոխառության** և **երկկողմանի դրամաշնորհների** տեսքով: **Երկկողմանի դրամաշնորհներն** իրենց մեջ ներառում են դրամաշնորհային օգնություն և տեխնիկական աջակցություն (սարքավորումների տրամադրում), որոնք մինչ 2008 թ. ֆինանսավորվում էին Միջազգային համագործակցության բանկի (ՃՄՀԲ) (JBIC) կողմից, այնուհետև այն վերանվանվեց Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն (ՃՄՀԳ) (JICA): Աջակցության տեսակը որոշվում է հաշվի առնելով օգնություն ստացող երկրների եկամուտների մակարդակը, տնտեսական զարգացվածությունը, ինչպես նաև՝ Համախառն Ներքին Արտադրանքի (ՀՆԱ) մակարդակը³: Այսպես՝ դրամաշնորհային աջակցությունը, որն անհատույց օգնություն է տնտեսապես թույլ պետություններին, Ճապոնիան տրամադրում է ոչ կայուն տնտեսական աճ արձանագրող, ցածր ՀՆԱ ունեցող պետություններին: Փոխառությունը կամ վարկերը տրամադրվում է հաստատուն տնտեսական աճ արձանագրած զարգացող պետություններին, իսկ տեխնիկական աջակ-

³ ODA by Region Central Asia and the Caucasus, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 16.08.2021, https://www.mofa.go.jp/policy/oda/page_000010.html#armenia

ցություն՝ բարձր ՀՆԱ ունեցող երկրներին, որոնց անհրաժեշտ է տեխնիկական սարքավորումների տրամադրմամբ խթանել և զարգացնել տնտեսական, տրանսպորտային ենթակառուցվածքները: Հատկանշական է, որ ԶՊԱ ծրագիրը Ճապոնիայի «Փափուկ ուժի» քաղաքականության իրականացման հիմնական գործիքներից մեկն է: Արդեն հետսառըպատերազմյան շրջանում Ճապոնիան դարձավ ԶՊԱ ծրագրի ամենամեծ դոնորը:

Այսպիսով, Ճապոնիա - Հայաստան տնտեսական հարաբերությունների առաջին փուլի ընթացքում Ճապոնիայի կառավարությունը ՀՀ-ին տրամադրում է միայն դրամաշնորհներ՝ փորձելով աջակցել տնտեսական ճգնաժամի հաղթահարմանը: Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրված դրամաշնորհային աջակցության տեսակներն են՝

- ✓ Դրամաշնորհային աջակցություն հիմնարար մարդկային անվտանգային նախագծերին (Grassroots)*,
- ✓ Դրամաշնորհային աջակցություն հիմնարար մշակութային նախագծերին (Grassroots),
- ✓ Հասարակ դրամաշնորհային աջակցություն,
- ✓ Մշակութային դրամաշնորհային աջակցություն,
- ✓ Ոչ նպատակային դրամաշնորհային աջակցություն:

Ոչ նպատակային դրամաշնորհային ծրագիր Հայաստանում Ճապոնիան իրականացրել է մեկ անգամ (1997-1998 թթ.)՝ տրամադրելով 500 մլն իեն, որի արդյունքում Հայաստան ներկրվեց նավթամթերք, տպագրական թուղթ, մինի տպարան, փշալար, մարդատար միկրոավտոբուսներ և փոքր տարողությամբ բեռնատարներ⁴:

Նպատակային դրամաշնորհներն ուղղված են թիրախավորված ոլորտների զարգացմանը՝ նպատակ ունենալով բարելավել **առողջապահության, սոցիալական ոլորտի ծառայությունները և պահպանել պարմամշակութային արժեքները:**

Առողջապահության բնագավառում Ճապոնիայի կառավարության կողմից իրականացված ծրագրերից են՝ 1998/1999 թթ. ֆինանսական տարվա համար նախատեսված «Արմենիա» հանրապետական բժշկա-

* Նշենք, որ «Հիմնարար» ("Grassroots") դրամաշնորհային ծրագրերը, որոնք Ճապոնիայի կառավարությունը սկսեց Հայաստանին տրամադրել 1999 թվից, չի մտնում ԶՊԱ ծրագրերի մեջ: Այն տրամադրվում է պետությանը ոչ կառավարական կազմակերպությունների (NGO) միջոցով:

⁴ Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 78:

կան կենտրոնի բուժսարքավորումների արդիականացման ծրագիրը (5.395.000 ԱՄՆ դոլար), որն ավարտին հասցվեց 2001 թ. մարտին: Այս ծրագրի շնորհիվ հիվանդանոցը համալրվեց նոր սարքավորումներով: Բուժսարքավորումների արդիականացման հերթական ծրագրերից էին նաև Հակատուբերկուլյոզային հանրապետական, «Նորք» մանկական ինֆեկցիոն, Երևանի թիվ 3 շտապօգնության մանկական հիվանդանոցների համապատասխան սարքավորումներով համալրումը (շուրջ 5 մլն ԱՄՆ դոլար)⁵:

Սոցիալական ոլորտի բարելավման նպատակով տրամադրվել են դրամաշնորհներ գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի գնման (2011 թ.)⁶, հրշեջ ծառայությունների և հակահրդեհային սարքավորումների (2017 թ.)⁷, թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու (2021 թ.)⁸ նպատակով և այլն:

Մշակութային դրամաշնորհային աջակցությունը տրամադրվել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (1999 թ.), Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի (2004 թ.), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համար երաժշտական գործիքների և ձայնային սարքավորումների ձեռքբերման նպատակով (2008 թ.): 2001 թ. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան) տրամադրվել է 49.300.000 ճապ. իեն դրամաշնորհ՝ պատմական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված սարքավորումների ձեռքբերման նպատակով:

«Հիմնարար» ("Grassroots") դրամաշնորհային ծրագրերի շրջանակում մինչ այժմ իրականացրվել են այնպիսի ծրագրեր, ինչպիսին են՝ Մարտունի քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի վերականգնումը (67 հազար ԱՄՆ դոլար), հաշմանդամ երեխաներին պրոթե-

⁵ Նույն տեղում, 79:

⁶ Ճապոնիայի կառավարության «Սակավապահով ֆերմերների համար դրամաշնորհային աջակցություն» 10-րդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան տնօրինելու մասին, ՀՀ կառավարություն որոշում, 17. 02.2011թ., <https://www.e-gov.am/gov-decrees/item/19075/>

⁷ Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project "The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City", Website of Japan International Cooperation Agency, https://www2.jica.go.jp/en/evaluation/pdf/2013_0867940_4_f.pdf

⁸ Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման դրամաշնորհային ծրագրի պայմանագրի ստորագրման արարողություն, https://www.am.emb-japan.go.jp/files/1001443-63.pdf?fbclid=IwAR1CP17DsZkXTeODfiDIIC5iwHOONRoTEWueuFGi_V2WE7uR6Rq3nIK6U8U

զավորման օգնությունը (50.5 հազար ԱՄՆ դոլար), մանկական բժշկական սարքավորումների տրամադրումը (46 հազար ԱՄՆ դոլար), Գեղարքունիքի մարզի դպրոցների կահավորումը (79 հազար ԱՄՆ դոլար) և այլն⁹: 2008 թ. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին կրկին շնորհվեց մշակութային դրամաշնորհ, այս անգամ «Grassroots» ծրագրի միջոցով: Մշակութային դրամաշնորհներ են տրամադրվել նաև Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուների վերականգնման համար սարքավորումների վերազինման (2009 թ.), Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման (2017 թ.)¹⁰, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտական արվեստի վերականգնման և պահպանման համար նախատեսված սարքավորումների բարելավման (2018 թ.)¹¹ նպատակով:

21 տարվա ընթացքում (1999-2020 թթ.) Ճապոնիայի կառավարության "Grassroots" դրամաշնորհների շնորհիվ ՀՀ-ում ֆինանսավորվել են 81 նախագիծ՝ 6.102.678 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ¹², իսկ ընդհանուր դրամաշնորհային աջակցությունը կազմել է 81.464.285 ԱՄՆ դոլար¹³:

Ճապոնիայի տնտեսական քաղաքականության **երկրորդ փուլի** սկիզբը դրվեց 2000 թ., երբ Ճապոնիայի կառավարությունը Համաշխարհային բանկի միջոցով (ըստ 1999 թ. փետրվարի 18-ին Տոկիոյում ստորագրված վարկային համաձայնագրի) Հայաստանին տրամադրեց **առաջին փոխառությունը** (5 մլրդ 399 մլն ճապոնական իեն)՝ «Էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման՝ ցանցերի վերականգնման ծրագրի» իրականացման նպատակով:¹⁴

⁹ Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 79:

¹⁰ **Japan International Cooperation Agency (JICA) Signed on Grant Agreement with Armenia:** The Archive of the Public Television will be Digitized, Website of Japan International Cooperation Agency, 30.03.2017, <https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/170330.html>

¹¹ **Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia,** Website of Japan International Cooperation Agency, 16.02.2018, <https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/press180216.html>

¹² **Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP),** Website of Embassy of Japan in Armenia, 11.08.2021, https://www.am.emb-japan.go.jp/itpr_en/b_000195.html

¹³ **Japan's Development Cooperation with the Republic of Armenia,** Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2019, <https://www.mofa.go.jp/files/000476406.pdf>

¹⁴ Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 71:

Հայ-ճապոնական հարաբերությունների հետագա զարգացման, գործնական համագործակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, կառավարական և մասնավոր ներդրումների իրականացումը համակարգելու, այդ թվում Ջարգացմանն ուղղված Ճապոնիայի պաշտոնական օգնության ծրագրերն իրականացնելու նպատակով 2000 թ. հուլիսին Երևանում ստեղծվեց **Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեն**, որի կազմում ընդգրկվեցին ՀՀ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ՀՀ մասնավոր սեկտորը ներկայացնող արդյունաբերողներ և գործարարներ: Արդեն 2000 թ. օգոստոսին Տոկիոյում հիմնադրվեց **Ճապոնա-հայկական տնտեսական համագործակցության կոմիտեն**, որի կազմում, ի տարբերություն Հայ-ճապոնական կոմիտեի, ընդգրկվեցին միայն մասնավոր հատվածի ներկայացուցիչներ¹⁵: Երկու կոմիտեների առաջին համատեղ նիստը տեղի ունեցավ Տոկիոյում 2001 թ. հունիսի 27-ին, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ տնտեսական համագործակցությանը, մասնավորապես՝ ՀՀ-ում ճապոնական ներդրումների խրախուսմանը, առավել հեռանկարային բնագավառներում համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, բարձր տեխնոլոգիայի ոլորտում համագործակցության հաստատմանը, շփումների ակտիվացմանն ու կապերի ընդլայնմանը վերաբերող հարցեր¹⁶: Այս համաձայնագիրը նոր շունչ հաղորդեց երկու երկրների տնտեսական հարաբերություններին մարդասիրական օգնությունից, դրամաշնորհների և վարկերի տրամադրման քաղաքականությունից ուղղակի ներդրումների միջոցով լիաժեք և փոխշահավետ համագործակցության անցմանը՝ ակտիվացնելով տնտեսական համագործակցությունը: Արդեն, 2001 թ. սեպտեմբերին ճապոնացի փորձագետների առաջին պատվիրակությունը ժամանեց Հայաստան՝ «Երևան քաղաքի ճանապարհների վերականգման» նախագծի իրականացման նպատակով: Ծրագիրն ավարտին հասցվեց 2003 թ. աշնանը¹⁷:

2001 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն առաջին անգամ պաշտոնական այցով ժամանեց Ճապոնիա, որի ընթացքում հանդիպեց Ճապոնիայի վարչապետ Ջունիչիրո Կոիժումիի հետ: Հանդիպումից հետո ստորագրվեց համատեղ հայտարարություն «Հայաստանի

¹⁵ Նույն տեղում, 71-72:

¹⁶ Nazarmuhamedov Bobur 2018: 177.

¹⁷ Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 80:

և Ճապոնիայի միջև բարեկամության և գործընկերության մասին», որում կողմերը համաձայնվեցին ամրապնդել համագործակցությունն ահաբեկչության դեմ մղվող պայքարում, ջանքեր գործադրել միջուկային զենքի փորձարկումներն արգելելու ուղղությամբ, ինչպես նաև զարգացնել հարաբերությունները քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում¹⁸:

Այս պայմանագիրը մեծ նշանակություն ունեցավ երկկողմ տնտեսական հարաբերությունների ամրապնդման հարցում, քանի որ Ճապոնիան օգնության ծրագրերից անցնում կատարեց համագործակցության և զարգացման ծրագրերի իրականացմանը՝ բարենպաստ նախապայմաններ ստեղծելով ՀՀ-ում ճապոնական ուղղակի ներդրումների և տնտեսական այլ ծրագրերի իրականացման համար: Վերոնշյալ այցի ընթացքում ստորագրվեցին նաև 2 հայտարարագրեր՝ Ճապոնիայի կառավարության ԶՊԱ ծրագրի ներքո Հայաստանում բժշկական և մշակութային դրամաշնորհային նախագծերի իրականացման¹⁹, ինչպես նաև ստորագրվեց համաձայնագիր՝ Հայաստանի հանքային արդյունաբերության զարգացման վերաբերյալ²⁰:

Ճապոնիան Հայաստանին **Երկրորդ փոխառություն** տրամադրելու վերաբերյալ համաձայնագիրը ստորագրեց 2005 թ. մարտի 29-ին ԶՊԱ ծրագրի բազմակողմանի աջակցության տրամադրման շրջանակներում ՃՄՀԲ-ի միջոցով՝ «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ²¹: Նշված համաձայնագրի հիման վրա ՃՄՀԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրեց ԶՊԱ վարկ (15 մլրդ 918 միլիոն ճապոնական իեն) արտոնյալ պայմաններով՝ 0,75 % տարեկան տոկոսադրույքով և 40 տարի մարման (որից 10 տարին արտոնյալ) ժամկետով: Համաձայնագրով նախատեսվում էր հանրապետության մայրաքաղաքի միակ ջերմաէլեկտրակայանին հարակից տարածքում կառուցել գերժամանակակից, բարձրարտադրողական, բարձրարդյունավետ, բնապահպանական տեսակետից

¹⁸ Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 19.12.2001, <https://www.mofa.go.jp/region/europe/armenia/joint0111.html>

¹⁹ Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան 2005, 62-63:

²⁰ Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 19.12.2001, <https://www.mofa.go.jp/region/europe/armenia/joint0111.html>

²¹ Activities in Armenia, JICA's Projects in Armenia, Website of Japan International Cooperation Agency, <https://www.jica.go.jp/armenia/english/activities/index.html>

ավելի անվտանգ, լրիվ ավտոմատ կառավարմամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայան 205 ՄՎտ անվանական հզորությամբ և 103 ԳԿալ/ժ ջերմության առաքմամբ, որի նպատակն էր բարձրացնել ՀՀ-ում էլեկտրաէներգիայի մատակարարման հզորությունը և նպաստել Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման աճին:

Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (ՀՇԳՑԷ) նախագծի իրականացման համար խորհրդատու էր ընտրվել ճապոնական «Tokyo Electric Power Service Co., Ltd.» (TEPSCO) ընկերությունը, որն արտասահմանում համանման էլեկտրակայանների կառուցման մեծ փորձ ունի: «TEPSCO» ընկերության կողմից խորհրդատվական ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց, որի իրականացման համար ճապոնական կողմը հատկացրեց 843 մլն 150 հազար ճապոնական իեն:

Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (ՀՇԳՑԷ) նախագծի կառուցումն իրականացրեց «Mitsui & Co., LTD» (Ճապոնիա) և «GS Engineering and Construction Corp.» (Կորեայի Հանրապետություն) ընկերություններից կազմված կոնսորցիումը, որի համար Ճապոնիան տրամադրեց **լրացուցիչ փոխառություն**²²՝ 26 մլրդ 409 միլիոն ճապոնական իեն (10 մլրդ 491 մլն ԱՄՆ դոլար) չափով²²:

Արդեն 2010 թ. ավարտին հասցվեց Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի կառուցման աշխատանքները և տեղի ունեցավ հանդիսավոր բացումը: Հանդիսանալով հանրապետության մայրաքաղաքի միակ ջերմա-էլեկտրակայանը՝ Երևանի ՋԷԿ-ը երկար տարիներ ի վեր ապահովում է Երևանի հարավային արդյունաբերական շրջանի ձեռնարկությունների տեխնոլոգիական մատակարարումը, ինչպես նաև Շենգավիթ և Էրեբունի համայնքների բնակելի թաղամասերի կենտրոնացված ջեռուցումը տաք ջրի մատակարարման միջոցով²³:

Այսպիսով, Ճապոնիան 1999 - 2019 թթ. ընթացքում Հայաստանին տրամադրել է ընդհանուր առմամբ **3 փոխառություն**²³՝ «էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման՝ ցանցերի վերականգման ծրագրի» և երկու փոխառություն «Երևանի համակցված շոգեգազային

²² **Նույն տեղում:**

²³ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն կայքէջ, <http://www.minenergy.am/page/531>

ցիկլով էլեկտրակայանի նախագծի» իրականացման համար, որը կազմել է 284 մլն ԱՄՆ դոլար (31 մլրդ 808 մլն ճապ. իեն)²⁴:

Ճապոնիայի՝ Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության **երրորդ փուլ** ազդարարեց 2005 թ. հունիսի 8-ին Ճապոնիայի կառավարության և ՀՀ-ի միջև կնքված համաձայնագիրը, որը սկիզբ դրեց երկկողմանի **փեխնիկական համագործակցությանը**²⁵: Այսպես՝ Ճապոնիայի կառավարության կողմից կյանքի է կոչվել Մոր և մանկան առողջության / վերարտադրողական առողջության (2004-2006թթ.), Սողանքներից տուժած համայնքների զարգացման (2004-2006 թթ.)²⁶, Փոքր և միջին ձեռնարկությունների մարդկային ռեսուրսների զարգացման (2005-2008 թթ.), Սեյսմիկ ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման պլանավորման (2010-2012 թթ.), Տեղական արտադրության զարգացման և տեղական ապրանքանիշերի խթանման (2013-2016 թթ.), Սողանքային աղետների կառավարման (2014-2017 թթ.), Հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար նախատեսված գերժամանակակից սարքավորումների տրամադրման վերաբերյալ (2021 թ.)²⁷ նախագծերն ու ծրագրերը²⁸:

Հարկ է նշել, որ Ճապոնիան, բացի երկկողմանի աջակցությունից, Հայաստանին տրամադրում է նաև **բազմակողմանի աջակցություն**, մասնավորապես՝ Ասիական Զարգացման բանկի (ԱԶԲ), Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի միջոցով: Այսպես՝ 2005 թվից սկսած, երբ Հայաստանը միացավ ԱԶԲ-ին, Ճապոնիան ԶՊԱ ծրագրի շրջանակներում

²⁴ Japan's Development Cooperation with the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2019, <https://www.mofa.go.jp/files/000476406.pdf>

²⁵ **Agreement on Technical Cooperation between the Government of Japan and the Government of the Republic of Armenia**, Website of Japan International Cooperation Agency, 08.06.2005, <https://www.jica.go.jp/jourekun/act/actdata/110000118/current/FormEtc/13000018001000000002.pdf>

²⁶ «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության Միջազգային Համագործակցության Գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության միջև ստորագրված համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու մասին, 29.03.2004, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=24469>

²⁷ Միայն հնագույն պատմություն ունեցող ժողովուրդը կարող է այսպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի կայքէջ, https://escs.am/am/news/9318?fbclid=IwAR3o48Atm-NrAKN-LQrxdgjc3oEiwG9jJRSfe5_GJ6quy3KcirTCXjhA5vB8

²⁸ **Activities in Armenia, JICA's Projects in Armenia**, Website of Japan International Cooperation Agency, <https://www.jica.go.jp/armenia/english/activities/index.html>

իրականացրել է 8 նախագիծ (տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, առողջապահության, քաղաքային ենթակառուցվածքների ու ծառայությունների ոլորտներում)՝ ընդհանուր \$606.5 մլն ԱՄՆ դոլար արժուողությամբ: Ավելին՝ 2020 թ. ԱԶԲ-ի միջոցով Ճապոնիան 2 մլն դոլարի դրամաշնորհ տրամադրեց Հայաստանի Հանրապետությանը՝ կորոնավիրուս հիվանդության կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար: ԱԶԲ-ը նաև 20 մլն ԱՄՆ դոլարի վարկ հատկացրեց Հայաստանի էլեկտրական ցանցերին՝ համաճարակի ընթացքում էլեկտրաէներգիայի կենսական պաշարների ապահովման նպատակով, ինչպես նաև տրամադրեց 500.000 ԱՄՆ դոլար՝ անձնական պաշտպանիչ սարքավորումներ և այլ բժշկական պարագաներ ձեռք բերելու և 750.000 ԱՄՆ դոլարի տեխնիկական օժանդակություն՝ ՀՀ-ում հեռակա ուսուցման հարթակ մշակելու և համաճարակի պայմաններում շարունակական որակյալ կրթություն ապահովելու համար²⁹:

Ճապոնիան Համաշխարհային բանկի միջոցով Հայաստանին տրամադրել է ֆինանսական աջակցություն՝ գյուղատնտեսության զարգացման, աղետների ռիսկի կանխարգելման, ինչպես նաև Հայաստանում աղքատ և խոցելի անձանց կենսաապահովման մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար³⁰:

Բազմակողմանի աջակցության տրամադրման շրջանակներում Ճապոնիան ՄԱԿ-ի Մարդու անվտանգության հավատարմագրային հիմնադրամի միջոցով տրամադրել է օժանդակություն Հայաստանի սոցիալապես անապահով ընտանիքներին, փախստականներին և ներքին տեղահանվածներին³¹, ինչպես նաև ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի միջոցով՝ աջակցելով արևային էներգիայի զարգացմանը Հայաստանի մի շարք համայնքներում³²:

²⁹ **Armenia and ADB**, Website of Asian Development Bank, <https://www.adb.org/countries/armenia/overview>

³⁰ Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն, ՀՀ Ճապոնիայի դեսպանությունը, 2017, <https://www.mofa.go.jp/files/0003652-07.pdf>

³¹ **Assistance by the United Nations Trust Fund for Human Security to the Project** “Sustainable Livelihood for Socially Vulnerable Refugees, Internally Displaced and Local Families” in Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 02.03.2009, https://www.mofa.go.jp/announce/-announce/2009/3/1188760_1130.html

³² **Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն**, ՀՀ Ճապոնիայի դեսպանությունը, 2017, <https://www.mofa.go.jp/files/0003-65207.pdf>

Երկկողմանի հարաբերությունների ամրապնդմանը և զարգացմանը նոր երանգ հաղորդեց 2018 թ. փետրվարի 14-ին Հայաստանի և Ճապոնիայի միջև ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագիրը³³: Հայաստանն առաջինն է տարածաշրջանի երկրներից, ում հետ Ճապոնիան ստորագրեց ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիր՝ խթանելով երկու բարեկամ երկրների միջև տնտեսական փոխգործակցությունը: Համաձայնագրի շնորհիվ ստեղծվեց իրավական հիմք Հայաստանում ճապոնական ներդրումների խթանման համար:

Հատկանշական է, որ ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների՝ արդեն 2018 թ. Ճապոնիա-Հայաստան ապրանքաշրջանառությունը 2017 թ.-ի համեմատ աճեց 12.5%-ով՝ կազմելով 91 մլն 436 հազար ԱՄՆ դոլար (10 մլրդ իեն): Դա բավական զգալի աճ է, քանի որ 2016 թ. ապրանքաշրջանառությունը կազմել է ընդամենը 52 մլն 40 հազար ԱՄՆ դոլար (5 մլրդ 723 մլն իեն): Նախորդ ռեկորդը գրանցվել էր դեռևս 2014 թ., որի ժամանակ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմեց 113 մլն 817.800 ԱՄՆ դոլար (12.5 մլրդ իեն) (տե՛ս Աղյուսակ 2)³⁴:

³³ **Ստորագրվեց Հայաստանի և Ճապոնիայի միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը**, 14.02.2018, <https://www.mfa.am/hy/press-releases/2018/02/14/fm-japan-agreement/7946>

³⁴ **Japan Ambassador: Armenia has Truly Unique Position in the World Trade System**, 23.02.2019, <https://news.am/eng/news/497328.html>

Աղյուսակ 2՝ Երկկողմանի ապրանքաշրջանառությունը* Հայաստանի և Ճապոնիայի միջև (հազար ԱՄՆ դոլար)

	Արտահանում	Ներկրում	Ընդհանուր ապրանքաշրջանառություն	
2014		149.0	113668.8	113817
2015		3526.9	57605.8	61133
2016		379.3	51661.4	52040
2017		366.1	81.021.2	81387.3
2018		375.4	99060.6	99436

Աղբյուր՝ Երկկողմ հարաբերություններ, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/jp>

Համաճարակով պայմանավորված 2020 թ.-ի դրությամբ կտրուկ նվազել է երկկողմ ապրանքաշրջանառությունը՝ կազմելով ընդամենը 27.5 մլն ԱՄՆ դոլար (3,03 մլրդ իեն), որից 2.21 մլրդ իենի ապրանքանիշ արտահանվել է Հայաստանից Ճապոնիա, մինչդեռ Ճապոնիայից Հայաստան է ներկրվել ընդամենը 0.82 մլրդ իենի ապրանքանիշ³⁵:

Ամփոփում

Ճապոնիա - Հայաստան տնտեսական հարաբերությունները վերջին 30 տարվա ընթացքում անցել են զարգացման մի քանի փուլ: Նորանկախ Հայաստանը, լինելով տնտեսապես թույլ, ոչ զարգացած պետություն, սկզբնական փուլում չէր ներկայացնում հետաքրքրություն Ճապոնիայի կառավարության համար: Երկկողմ տնտեսական հարաբերությունները սահմանափակվում էին Ճապոնիայի կողմից տարաբնույթ աջակցության տրամադրմամբ: Ըստ աջակցության տրամադրման

* Ճապոնիայից Հայաստան հիմնականում ներկրվում է վերգետնյա տրանսպորտային միջոցներ, օպտիկական և լուսանկարչական գործիքներ, մեքենաշինական և էլեկտրական սարքավորումներ: Հայաստանից Ճապոնիա է արտահանվում ոգելից ըմպելիքներ, դեղագործական մթերք, քիմիական միացություններ, պղինձ, երկաթ և ծխախոտ: Տե՛ս **Bilateral Relations, Japan**, <https://www.mfa.am/en/bilateral-relations/jp>

³⁵ Japan-Armenia Relations (Basic Data), Website of Ministry of Foreign Affairs of Japan, <https://www.mofa.go.jp/region/europe/armenia/data.html#section1>

տեսակի՝ Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում դիտարկել ենք երեք հիմնական փուլերի տեսքով: Ճապոնիան իր այս տնտեսական քաղաքականության շնորհիվ մեծապես աջակցեց ու նպաստեց Հայաստանի Հանրապետության կարևորագույն ոլորտների զարգացմանը: Արդեն 2018 թվից Ճապոնիան Հայաստանին սկսեց դիտարկել որպես լիիրավ տնտեսական սուբյեկտ, ում հետ բացի աջակցության տրամադրումից, հնարավոր է նաև կառուցել ամուր տնտեսական փոխշահավետ հարաբերություններ: Դրա վառ վկայությունն է ոչ միայն ներդրումների ազատականացման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը, այլև 2018 թ. սեպտեմբերին Ճապոնիայի արտգործնախարար Տարո Կոնոյի առաջին այցելությունը Հայաստան, որի ժամանակ կարևորվեց երկկողմ հարաբերությունների զարգացումը բանկային, նորարարության, սննդի անվտանգության, տեղեկատվական տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մշակութային փոխանակումների, գիտական և կրթական ոլորտների նախագծերի իրականացման ոլորտներում:³⁶ Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը խթանում է նաև ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի՝ Ճապոնիայի բարձրաստիճան ղեկավարության, ինչպես նաև ճապոնական կազմակերպությունների կառավարիչների հետ պարբերաբար հանդիպումներն ու համագործակցության շուրջ քննարկումները³⁷:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Երևանի ԶԷԿ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայքէջ, <http://www.minenergy.am/page/531> (վերջին այցելություն 25.09.2021)

Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման դրամաշնորհային ծրագրի պայմանագրի ստորագրման արարողություն, 2020, https://www.am.emb-japan.go.jp/files/100144363.pdf?fbclid=IwAR1CP17DsZkXTeODfDIIC5iwHOONRoTEwueuFGi_V2WE7uR6Rq3nIK6U8U

³⁶ **President Sarkissian hosted the Minister of Foreign Affairs of Japan**, Website of the President of the Republic of Armenia, 03.09.2018, <https://www.president.am/en/press-release/item/2018/09/03/President-Armen-Sarkissian-met-with-minister-of-foreign-affairs-of-Japan-Taro-Kono/>

³⁷ **Armenia wants to impart new quality to the relations with Japan and start a new page of cooperation** □ President Sarkissian met with the Prime Minister of Japan Suga Yoshihide, Website of the President of the Republic of Armenia, 24.07.2021, <https://www.president.am/en/press-release/item/2021/07/24/President-Armen-Sarkissian-met-with-Yoshihide-Suga/>

«Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության Միջազգային Համագործակցության Գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության միջև ստորագրված համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու մասին, 29.03.2004, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=24469> (վերջին այցելություն 25.09.2021)

Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ. 2005, Հայաստան – Ճապոնիա. Քաղաքական, Տնտեսական, Մշակութային և գիտական հարաբերություններ, Երևան, Չանգակ-97, 2005, էջ 180+144 (ճապ.):

Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության զարգացմանն ուղղված համագործակցություն, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2017, <https://www.mofa.go.jp/files/000365207.pdf>

Ճապոնիայի կառավարության «Սակավապահով ֆերմերների համար դրամաշնորհային աջակցություն» 10-րդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան տնօրինելու մասին, ՀՀ կառավարություն որոշում, 17.02.2011թ., <https://www.e-gov.am/gov-decrees/item/19075/>

Միայն հնագույն պատմություն ունեցող ժողովուրդը կարող է այսպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջ, https://escs.am/am/news/9318?fbclid=IwAR3o48AtmNrAKN-LQrxdgjc3oEiwG9jJRSfe5_GJ6quy3KCirTCXjhA5vB8 (վերջին այցելություն 05.10.2021)

Ստորագրվեց Հայաստանի և Ճապոնիայի միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագիրը, ՀՀ արտաքին գործերի նախարարության կայքէջ, 14.02.2018, <https://www.mfa.am/hy/press-releases/2018/02/14/fm-japan-agreement/7946> (վերջին այցելություն 25.09.2021)

Activities in Armenia, JICA's Projects in Armenia, Website of Japan International Cooperation Agency, <https://www.jica.go.jp/armenia/english/activities/index.html> (last access on 25.09.2021)

Agreement on Technical Cooperation between the Government of Japan and the Government of the Republic of Armenia, Website of Japan International Cooperation Agency, <https://www.jica.go.jp/jouaikun/act/actdata/110000118/current/FormEtc/13000018001000000002.pdf> (last access on 25.09.2021)

Armenia and ADB, Website of Asian Development Bank, <https://www.adb.org/countries/armenia/overview> (last access on 25.09.2021)

Armenia Wants to Impart New Quality to the Relations with Japan and Start a New Page of Cooperation □ **President Sarkissian Met with the Prime Minister of Japan Suga Yoshihide,** Website of the President of the Republic of Armenia,

- 24.07.2021, <https://www.president.am/en/press-release/item/2021/07/24/President-Armen-Sarkissian-met-with-Yoshihide-Suga/>
- Assistance by the United Nations Trust Fund for Human Security to the Project “Sustainable Livelihood for Socially Vulnerable Refugees, Internally Displaced and Local Families” in Armenia**, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 02.03.2009, https://www.mofa.go.jp/announce/announce/2009/3/1188760_1130.html (last access on 25.09.2021)
- Bilateral Relations, Japan**, Website of Foreign Affairs of the Republic of Armenia, <https://www.mfa.am/en/bilateral-relations/jp> (last access on 25.09.2021)
- Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project “The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City”**, Website of Japan International Cooperation Agency, https://www2.jica.go.jp/en/evaluation/pdf/-2013_0867940_4_f.pdf (last access on 05.10.2021)
- Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia**, Website of Japan International Cooperation Agency, 16.02.2018, <https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/press180216.html>
- Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP)**, Website of Embassy of Japan in Armenia, 11.08.2021, https://www.am.emb-japan.go.jp/itpr_en/b_0-00195.html (last access on 05.10.2021)
- Japan Ambassador: Armenia has Truly Unique Position in the World Trade System**, Armenian News-NEWS.am Information-analytical Agency, 23.02.2019, <https://news.am/eng/news/497328.html> (last access on 05.10.2021)
- Japan International Cooperation Agency (JICA) Signed on Grant Agreement with Armenia: The Archive of the Public Television will be Digitized**, Website of Japan International Cooperation Agency, <https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/170330.html> (last access on 05.10.2021)
- Japan’s Development Cooperation with the Republic of Armenia**, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2019, <https://www.mofa.go.jp/files/000476406.pdf> (last access on 25.09.2021)
- Japan-Armenia Relations (Basic Data)**, Website of Ministry of Foreign Affairs of Japan, <https://www.mofa.go.jp/region/europe/armenia/data.html#section1> (last access on 25.09.2021)
- Japan's ODA-Fifty Years in the Front Lines**, Website of Japan International Cooperation Agency, https://www.jica.go.jp/english/publications/reports/network/archive_2004/vol_25_2.html (last access on 25.09.2021)
- Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia**, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 19.12.2001, <https://www.mofa.go.jp/region/europe/armenia/joint0111.html> (last access on 25.09.2021)
- Nazarmuhamedov B. 2018**, Japan’s ODA Policy toward Central Asia and the Caucasus an Analysis of Japanese Assistance to Economic Development in Kyrgyzstan and Armenia, "Journal of International and Advanced Japanese Studies, University of Tsukuba", Volume 10 ONLINE/March 2018, p. 169-185, http://japan.tsukuba.ac.jp/-research/JIAJS10_ONLINE03_Nazarmuhamedov.pdf (last access on 05.10.2021)
- ODA by Region Central Asia and the Caucasus**, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 16.08.2021,

https://www.mofa.go.jp/policy/oda/page_000010.html#armenia (last access on 25.09.2021).

President Sarkissian Hosted the Minister of Foreign Affairs of Japan, Website of the President of the Republic of Armenia, 03.09.2018, <https://www.president.am/en/-press-release/item/2018/09/03/President-Armen-Sarkissian-met-with-minister-of-foreign-affairs-of-Japan-Taro-Kono/>

Հապավումներ

ԶՊԱ - Զարգացման պաշտոնական աջակցություն

ՀՆԱ - Համախառն Ներքին Արտադրանք

ՀՇԳՑԷ - Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայան

ՃՄՀԲ - Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Բանկ

ՃՄՀԳ - Ճապոնիայի Միջազգային Համագործակցության

Գործակալություն

Եվա Հարությունյան

« ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ »
yeva.harutyunyan85@gmail.com

JAPAN'S ECONOMIC POLICY IN ARMENIA (1992-2021)

Yeva Harutyunyan

Keywords: *Japan, Armenia, Economic relations, Official Development Assistance, grants, loan, technical assistance.*

The purpose of this article is to show the economic policy of Japan towards Armenia after the establishment of Armenian-Japanese diplomatic relations. The article presents three phases of Japan's economic policy, taking into account the type of assistance provided by Japan to Armenia, which is correlated with Armenia's economic and GDP's growth.

The first phase covers 1992-99, during which bilateral economic relations were limited to grant assistance provided by Japan to Armenia, with the aim of supporting the economic recovery of the newly independent state and ensuring sustainable economic growth.

The second phase (2000-04) marked the beginning of economic cooperation between the two countries. Due to its stable economic growth, Armenia received loans from Japan for developing economic infrastructures.

During the third phase (2005- up to date) Japan has expanded its cooperation with the Republic of Armenia and begun to provide technical equipment for the development of targeted sectors. At this stage, Japan clearly defined the direction of its assistance and the sectors necessary for the stimulation of the Armenian economy, in particular, the energy sector, small and medium-sized businesses, as well as the development of villages. Japan also greatly supports Armenia by providing Japanese technologies for risk prevention in natural disaster zones and organizing training courses and discussion- meetings for

Armenian specialists aimed to promote capacity building on the implementation of disaster risk reduction and emergency situations.

Since 2018, Japan has begun to consider Armenia as a full-fledged economic entity, and review the possibility to build mutually beneficial economic relations. The main witnesses are the signed agreement on investment liberalization in 2018, the visit of Japanese Foreign Minister Taro Kono to Armenia for developing bilateral relations in the fields of banking, innovation, food security, information technology, artificial intelligence, cultural exchange, scientific and educational projects, as well as active contacts of Armenian President with Japanese organizations.